

սաստիկ կը լեցուի . բայց երբեմն ալ որ սը երկայն ատեն կ'երթայ ու լաւ աւարով չըլլար . ինչուան կրնայ գրեթէ բռըրովին անօգուտ ալ ըլլալ . բայց այս բաներուն պատճառները չգիտցուիր : Ը անաձուկներն ալ երբեմն արգելք կ'ըլլան ըինկային որսին , որ ուռկանները կը պատռատեն ներս կը մտնեն , կամ ձկներուն վրայ որ մէյ մը իյնան՝ ըինկային խումբերուն ուղղութիւնը կը փոխեն . նոյն բանը վախնալու է նաև ուրիշ շատակեր ձկներէ ալ :

Յայտնի է թէ ամէն տարուան այս զափ անթիւ բազմութեամբ բռնուած ըինկային և ոչ հարիւր հազարորդ մասը մէկէն կը գործածուի . անոր համար կերպը գտած են զանիկայ պահելու , ու այնպէս աշխարհքիս չորս կողմը կը խաւրեն : Երկու կերպով կը պահեն ըինկան . աղոտելով , կամ չորցընելով . աղոտելը Պուքէլս հոլանտացին հնարեց , և այս գիւտը իր երկրին համար

ամբաւ հարստութեան պատճառ եղաւ , և ինչուան հիմա ալ Հոլանտայի աղած ըինկաները լուրոպայի լաւագոյն աղոտածներն են : Խակ երկրորդ կերպը , որ նոյնպէս օգտակար է , Պաղպիս մէջ Տիեր քաղաքին բնակիչքը գտան . և չորցուցած ըինկաները այս առաւելութիւնն ունին մէկանոնց վրայ , որ աւելի դիւրաւ կը պահուին ու աւելի դիւրաւ տեղէ տեղ կը փոխազրուին : Ժե դարուն գտնուեցան ըինկան պահելու հնարքները . անկէց առաջ առօրեայ գործածութեան համար կ'որսային այս ձուկը . այն ատեն ասիկայ սովորական որս մըն էր , իսկ հիմա մեծ վաճառականութիւն մը դարձած է :

Իինկային ծանրութեան 22ր մասը եղէ . ասիկայ հանելու համար՝ բաւական է որ ձուկը եռացեալ ջրով եփես , որովհետեւ այն ատեն եղը ջրին երեսը կ'ելլէ . և ասիկայ կը ծառայէլու :

Ժ Ա. Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Պ Բ

Բիանորի Գաղղիոյ կայսեր դատաձանին դատաստանը :

Ծանօթ է ամենուն որ ինչպէս վերջերս Գաղղիոյ ներկայ կայսեր Կարոլէսն Գին կեանքը վըտանգք մէջ ինկաւ անդդամ դաւաճանի մը ձեռքով . որ Բիանորի կ'ըստեր : Բարեբազգաբարար կայուրը անշնաս մնաց , ու յանցաւորն ալ մէկէն ըռնուելով վրան դատաստան եղաւ : Այս գիւպուածը նշանաւոր բան մը ըլլալով շատ հետաքըրութիւն կրնայ շարժել նիւթին պատճառներն ու պարագաները իմանալու . անոր համար մնաք ալ Օրադրիս թերթերուն մէջ բոլոր դատաստանը կը դնենք , միանդամայն իրու հաշակ մը տալու համար մեր բանասեր ընթերցողաց եւ բոպայի դատաստաններուն կերպին վրայ :

Նիստ յ7 մայիսի :

Ըստ ատենէ ՚ի վեր այսափ բազմութիւն գիշուած չէր Բարիգու մէջ դատաստան մը տեսնելու . արքայասպանի մը դատաստան ալ ըլլալով բնականապէս աւելի փափաքանօք կը դիմէին :

Կերս մոտաւ ամբաստանուածը , ու ամենուն աչքը անոր վրայ գարձաւ . մութ մոխրագոյն ըլլագեստ մը հագած միջն հասակով մարդ մըն էր , երեսը երկայնաձև , մազերը թուխ , նոյնպէս մօրուքն ու ընչացքն ալ մէ : Ուժով էր գէմքը . այն

խոր աչուցները , կամարաձեւ յօնքերն ու երկայն ձականը՝ կը ցուցնէին որ հաստատուն ու զօրաւոր բնաւորսւթեան տէր մարդ է . և ամենելին նշան մը չէր երեար վրան որ արուեստաւոր ըլլայ : Տեսակ մը հետաքըրութեամբ , բայց առանց այլայլութեան՝ աչքը հանդիսականաց վրայ կը պարտ ցընէր . և կերպէն կ'երեար որ իմացած է թէ ինչ մեծ ամբաստանութիւն էր որ վրան կը ծանրանար , ու անոր հետևանքներն ալ կը գուշակէ :

Նահագակ Բարտուբէս-Լ-Քու է հարցմէ . Ամբաստանուած , որո՞նք են անուններդ ու մականուններդ : — Ամբաստանուածը մէջ այսուհետ է Շարիքդ . — Քամնը ու տարեկան : — Ո՞ւ ծներ ես . — Զեմ յիշեր : — Բայց Խաղիոյ մէջ ծնած չէս . — Այսումայ տերութեան մէջ : — Խռնուած ատենդուր կը բնակեիր . — Զեմ յիշեր . անցագրիս մէջ գրուած պիսի ըլլայ : — Կողը-Տամ-ող-Կրաս ըսուած փողոցին մէջ չէիր բնակեր . — Կարծեմ անանկ է : — Հիմա լսէ քու ամբաստանութեանդ ատենական գրուածքը :

Գոմէրսոն ատենագիրը այս հետևեալ գրուածքը կը կարգայ . “ Յովհաննէս Բիանորի , որ անցագրի մը մէջ Անտոն Վիվերանի անունը դնել առաջ իրեն , ժնած է հալույ տերութեան գա-

ւառներէն մէկուն մէջ, զորն որ ինքը չուզեց ի. մայրնել: Կարգուած չէ, ու արուեստով կօշկա. կար է: Ըստ իրեն խոստովանելուն, 1849ին հոռ. մայեցի ապստամբ զօրքին մէջ կամաւոր զինուոր էր, ինչպէս որ ինքը զինքը կ'անուանէ, խոռվար զինուորական գլուխներուն մէկուն հրամա. նաստարութեանը տակ: ասիկայ իրեն կը հրա. մայէր, ու ինքը կ'ըսէ թէ անոր մէջ ըլլալը չդի. տէր: Այս միջոցին բռնադատուեցաւ Հռոմայ տերութեան սահմանները թողուլ, և ուրիշ շա. տերուն հետ բիեմոնդ դիմեց, ուր քանի մը տարի կեցաւ՝ ինչուան 1853ին վերջը կամ 1854ին սկիզբ. ները:

„Այն ատենէն սկսեալ եկաւ Մարտիլիա, ուր քիչ մը ատեն կեցաւ Ավելիքանի անուամբ, նա. աստեաց կօշկ կարելով, գոնէ ինչ որ ինքը կ'ը. սէ. Ետքը Դաղղոյ մէջ այլ քաղաքներ գնաց, Լիոն, Շարոն-սիւր-Սօն: և վերջը Բարիդ, ուր հաստատուելու թուղթ մը առաւ Լիվէրանի ա. նուամբ, ինչպէս որ կ'երեայ առանց ապրուասը պատրաստելու արուեստէն: Յանձնուած էր Մա. լէ անունով կօշկակարի մը, որ ասոր աշխատու. թիւն տալու հաւանեցաւ: բայց Բիանորի նեղա. ցնելով զինքը՝ քիչ ատենէն արձկուեցաւ:

„Բարիդ քանի մը ամիս կենալէն ետքը՝ յան. կարծակի Լոնդրա ճամբայ ելաւ, ուր ինչպէս կ'ը. սէ: Իրեքուկէն ամիս մը կենալու համար գնաց: Ինչ պատճառու թողուց Գաղղիան, ինքը շիմա. ցըներ: բայց իմաստ ապահով է որ ձեռքը աշխա. տութիւն չունենալէն չէր որ տար երկիր գնաց, սրովհետեւ Բարիդու մէջ դիմացն եկած առիթը չուզեց բանի բերել:

„Բայց պատճառու ինչ որ ալ ըլլայ, ինքը Լոն. արա հասաւ 1854ին դեկտեմբեր ամսոյն մէջ, և հոն մէկէն ի մէկ՝ շարաթը 2 և $\frac{1}{4}$ ստեռլին սկը. սաւ վաստրիլ, որ է ըսել գրեթէ 68 ֆրանդ: Այսպէս կ'ըսէ ինքը: բայց ամենափին շիմացներ ոչ տիրոջ անունը, որ այսափ վարձի համար աշ. խառութիւն կու տար իրեն, ոչ անոր հասցէն, և ոչ այն թաղը, ուր որ էր անոր ինանութը:

„Ուրեմն Բիանորի շարաթը 68 ֆրանդ կը վաս. տըկէր, և ինքը կ'ըսէ թէ ամէն շաբաթ 30 ֆրանդ խնայելով կը պահէր: Խոկ արդ ինքը իրեքուկէս ամիս կեցաւ Լոնդրա: ուրեմն ասկից կրնանք հե. տեցնել, որ երբոր ինքը այն մայրաքաղաքէն ե. լաւ՝ կրնար 300 ֆրանդ քովը ունենալ, թէ որ ճշմարիտն ըստաւ: Ասիկայ անկարիկի է ու անձըշ. մարտանման: Լոնդրայի մէջ չքտնուուիր այդ ամ. բաստանուողին արուեստէն մարդ մը, որ այդչափ ստակ գաստրիկ ու իր ծափքերն ընելէն ետքը՝ այս. չափ շատ ստակ խնայել կարենայ: Մէյ մ'ալ յանկարծակի մարտի 26ին Բիանորի կ'ելէ Լոն. արայէն գոխանակ կենալու այնպիսի վիճակի մը մէջ, որով այսպէս լաւ կ'ապրէր, ու Բարիդ կը դառնայ: Այն ատենէն ետքը՝ ինչ ըրաւ:

„Մալէ զինքը արձկեր էր՝ լաւ չաշխատելուն համար: Միշը կը բնակի՝ թիւ 40, կը ծանուցանէն թէ Բիանորի որ Անդլիա երթալէն առաջ կ'երեար թէ ձեռքը աշխատութիւն ունէր ու շատ զուարթ էր, Բարիդ դառնալէն ետքը ա'լ չէր աշխատեր, ու միտքը զբաղած կ'երեար մէկ գիտաւորութեամբ մը, որ իրեն սաստիկ մտածել կու տար: Ուրեմն

կրնանք հապատակել որ Բիանորի իրաք անուամբ միայն արուեստաւոր է, և թէ շատ ատենէ ի վեր աշխատաւթեամբ չէ որ ապրուատը կը դանայ: Իր ձեռութեարուն վրայ սաստիկ աշխատաւթեան հետք մը չկայ: ու բանուած ատենը՝ ոտքերը պղտիկ փայ. լուն կօշիկներ կային, որ ինքը չէր շննած, հապա. դնած էր, թէ պէտք և այնչափ սուղ ալ էին:

„, Բիանորեայ ինչ սարապիկելի յանցանկի ամ. բաստանուուիլը գիտալէն ետքը՝ ամեն մարդ կ'իմա. նայ թէ ինչպէս սաստիկ կերպով պէտք է որ ծած. կէ ինքը այն եկամուտներուն բանը, որոնցմով երկայն ատենէ ի վեր ապրեցաւ, ու այն պատ. ճառները, որ զինքը Մարտիլիա, Լիոն, Շալոն, Բարիդ ու Լոնդրա թափառել առւին:

„, Բիանորի որ 1849ին ապստամբութեան զի. նուոր եղաւ, այն ատենէն ի վեր իր դրշակին հաւատարիմ մնաց, ու 1853ին ինչ որ վեց տարի առաջ էր՝ նոյնը գտնուեցաւ, այսինքն մեծ գա. ւաճան մը, որ իր զըսուելիք քաղաքավարական վար. գապետութիւններուն ծառայեցուց զմարդասպա. նութիւնը:

„, Ամիս մըն է թողուց Լոնդրան, որ կեդրն է ամենէն առելի շար խռովայով զինքը ու, այն մար. դիկներուն՝ որոնք իրենց կերած հարուածոյն բարկութենէն ինչնւան մոլեգնութեան կ'երթան, և որոնք այն սասիճանի հասած են, որ անօրէնու. թիւն ընելը միայն իրենց ձեռքը միջոց է իրենց փառասեր դիտաւորութիւններուն, նիւթական բաներու վրայ ունեցած իրենց ախորժակին ու. իշխանութեան կարօտանանուն հասնելու համար: Այս պանդիստացեալներուն մէջ Բիանորի, ինքն ալ պանդիուտ, քանի մը ամիս կեցաւ: Փուճ տե. ղը կը ջանայ ինքը մխտելու տափկայ, դործքերը իր մխանելէն առելի ուժով կը խօսին, և ականյ կ'ամբատանեն վիճուլ:

„, Կը խոստովունի որ Լոնդրա եղած ատենը դնեց 160 ֆրանդով այն երկու բերնով ատրճանա. կը, որ կայսեր վրայ պարպած ատենը ձեռքէն տոննուեցաւ: Այսպէտէս Լոնդրայէն երկու պարզ ատրճանաներ բերաւ, որոնք նմանապէս վրան գանուեցան այն տնօրէնութեանն ատեն: Ի՞նչ պի. տի ըլլան այդ զէնքերը: Ինքը կ'ըսէ թէ կրկին ե. զեգով ատրճանակը անոր համար գնեց, որ վա. ճառքի հանէ, իսկ երկու պարզ ատրճանաներն ալ ծառայէ մը առեր է, որուն համոր կօշիկ շինած էր, և որն որ չկարենալով ստակ առլիրեն՝ վարձ. բին տեղ այն երկու ատրճանաները անւաւ, երբոր Ամերիկա ճամբայ ելելու վրայ էր: Ար. ժանի չէ որ այս պատասխանս մերժենք, որովհե. տե ինքիրեն անտեփի է:

„, Այն զէնքերուն տէր եղածին պէս՝ Բիանորի թողուց Լոնդրան, ու Բարիդ դարձաւ մարտի 26ին: Ճիմա գիտենք որ ալ ինքը լաւ աշխատու. թիւն մը չըրաւ. և ի վերայ այս ամենայնի կրցաւ զիլ զէնքեսաներ ու 11 ֆրանդի գաշոյն՝ մը ձեռք ձգել:

„, Հայ ամիս մը անցուց գատարկութեամբ ու. անտառակութեամբ: որովհենք որ իր բանուելուն նախընթաց օրը երկու ցոփ կնիկներ եկան առնե. լու զինքը իր պանդիուն, ու ինքը բռնադատուե.

ցառ հաւանելու : Ամբողջ այդ ամիսը՝ շատ հոգ տարաւ որ իր հաղորդակցութիւններն ու ըրածները ծածկէ . և անանկ զգուշութիւն ըրաւ , որ մեր ըրած ամէն արթնութեանը յաղթեց :

„ Ապրիլի 28ին՝ Բիանորի առաւտօր անէն դուրս ելաւ՝ վսան զէնք առած . իր կրկնն բերնով առըրժանակը , որն որ լեցուցեր էր , գտնիէն կախուած էր . իր երկու պարզ ատրճանակները , որոնք ալ նոյնպէս լեցուած էին , իր տափատին և պղտիկ գրպաններուն մէջ պահուած էին . իր դաշոյնն ալ հոն դրած էր , և հետո նաև աղեկ սուր ածելի մը : Զգեստաներուն մէջ դրաւ պղտիկ գլխարկ մըն ալ , որպէս զի այն ոճիրն ընելէն ետքը՝ թէ որ կարենայ բռնուելն իսալովիլ , փոփէ անիկայ մեծ գլխարկին հետ ու աւելի ապահովութիւն փափսի :

„ Բիանորի այսպէս պատրաստուելէն ետքը՝ հանգարաւ , պաղ սրտով , անխոսվ , ինչպէս որ կ'ըլլան ամէն բան աչք առնող մարդասպանները , Եվսուեան Դաշտէւ գնաց . գիտէր թէ հոնտեղէն պիտի անցնէր Կայսրը , որ ընդհանրապէս այն կողմէն ձիու գալու կ'երթայ : Գիտէր նաև որ Կայսրը անկասկած ամեննեին առանց հետևակիցներու կ'երթայ , ապահով ըլլալով բոլոր չորս կողմը գտնուողներուն մեծարանացն ու յարգական սիրոյն վրայ : Ասիկայ՝ ամբաստանուածին համար այնչափ աւելի յարմար առիթ էր . և ահա ինքը դարանի մէջ մտած՝ կը սպասէր իր զոհին :

„ Իրիուան 5 ու $\frac{1}{2}$ ժամուն ատենները , Կայսրը Բարիզէն ելաւ իդուալ ըստուած պատիշչին Շամբովը՝ Պուլունի անստառը երթալու համար : Ձիու վրայ էր՝ առանց ուզեկիցներու . ձախ կողմը միայն մէկ հոգի մը կար հետու : Բիանորի , որ մայթին զ վրայ էր , կառաց Շամբուն մէջ մտաւ , անոր կէտ անցաւ ու կայսեր մօտեցաւ՝ չորս հինգ քայլ հեռու . ետքը շուտ մը ատրճանակը ձեռքն առնելով՝ ետէէ ետէ երկու անդամ պարպեց Կայսեր վրայ :

„ Նախախնամութիւնը թող չտուաւ որ այսպիսի ցած անօրէնութիւն մը կատարուի : Կայսրը մէկէն կանկ առեր էր . և ինքը անձամբ հանդարտեցուց ժողովուրդը , որ եռանգեամբ վրան կը ժողովուէին , և այնչափ նեղացած էին այս ոճրոյն վրայ , որչափ որ սասատիկ կը փափաքէին տեսնելու իրենց Կայսեր երեսին վրայ այն անխոռովութիւնը , որ միշտ իրեն հետն է :

„ Պահապանին մէկը , որ այն յանցանքին գործուած տեղն էր , Բիանորիի վրայ յարձակեցաւ՝ երբոր այն խելացնորը երկրորդ ատրճանակ մը կ'առնէր ձեռքը . գետին զարկաւ զանիկայ , և իր քաջութեամբը արդիւեց որ երկրորդ փորձ մըն

ալ շշնէ : Անդիէն ուրիշ զինուորական մարդիկ ալ վրայ հասան . ու Բիանորի քիչ ատենէն արդարութեան ձեռքը յանձնուեցաւ : Նորը չժխտեց իր յանցանքը , և ոչ իսկ հիմա կը ժխտէ , ու կը ջանայ պատճառու տալ՝ ըսելով թէ զկայսրը հռոմեայ արշաւանքին համար կ'ատէ , որ իր աշխարհքին ու իր գերգաստանին կործանում բերաւ՝ իրեն խօսքին նայելով :

„ Յիրաւակ անկարգ մարդիկներու աչքին առ ներկիր մը ակրուած է՝ երբոր առաջին խաղաղութիւնը հոն նորէն կը հաստատուի , երբոր իշխանութիւնը կը սկսի բանիլ , և մանաւանդ երբոր արդարախոհ մարդիկ հասարակաց թշնամույն գէմ կը միանան ու կը վանսէն աւարառուները , որոնք աշխատագութէ մարդիկ անունը վրանին առած՝ ուրիշ վախճան չունին , բայց եթէ կողոպտել բոլոր անոնք , որոնք աշխատութեամբ ու խնայութեամբ՝ կրցած են քիչ մը ստացուածք շահիլ կամ պահել : Բիանորի այս կողմնակցութեան գործիքն եղաւ . այս կողմնակցութէ ախորժակները յագեցրնել ու վրէժներն առնել ուզեց զզուելի մարդասպանութեամբ մը : Ո՞վ կը հաւատայ Կայսեր գէմ ունեցած այս իր սկսին , որ շշմարիտն ըսելով շատ ուշ մնացեր է ու խիստ երկայն ատենէ վերջը գուրս զեղաւ : Զէ . Բիանորի անձնական թշնամութենէ չգրգռուեցաւ այս բանս գործելու . ինքը անփափուս ու սասակ առած մարդասպան մըն է , և թէկ տեղ ծառայեց այս կողմնակցութեան , որ գաշոյնն ու ատրճանակները տուաւ իրեն , և որն որ սպանութեան այսպիսի գործիքներու հետ մէկսեղ՝ մարդասպանին ձեռքը ուսկին ու արծաթը լեցուց , և այս ստակներուն մէկ մասին անիկայ գեռ տէրն էր՝ երբոր բռնուեցաւ :

„ Նախախնամութիւնը , չենք կընար հաղար անգամ չկրկնել , այսպիսի անպիտան հարուած մը ցյաղողուց . ինքը այդ դաւագրութիւնը փճացուց . և թէպէտ գաղղիա բարեբազգաբար նոր արդայասպանութեան մը վրայ չ'առաչեր , սակայն արդարութիւնը պէտք է դասէ յանցանորը , ու արժանի պատճով մը պատուհասէ զանիկայ :

„ Հետեւաբար՝ Յովհաննէս Բիանորի ամբաստանուած է՝ որ 1858 տարւոյս ապրիլի 28ին Բարիզու մէջ գաւաճանութեան փորձ մը ըրաւ ընդգեմ կէտաց կամ անձին Կայսեր . այդ յանցանքը Դատաստանագրոց 86դ հատուածին մէջ սահմանուած է , :

(ԿԸ ԸԱՐԱԽՆԱԿՈՒՄ)